ԳԻՆՈՒ ԲԵՐՔԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ 1889 Թ.

Պարիզ, 6 յունուարի (Նոր տոմար).

Ֆինանսների մինիստրությունը այսօր հրատարակեց 1889 թ. գինու բերքի մասին ժողոված թվերը։ Դորա համեմատ, գինու բերքն էր Ֆրանսիայում 23.223.600 հեկտոլիտր (հեկտոլիտրը հաւասար է 100 լիտրի)։ Այդ քանակությունը 6.878.500 հեկտոլիտրով աւելի նուազ է, քան 1888 թուականինը և 6.700.000 հեկտոլիտրով աւելի նուազ է, քան վերջին տասը տարիների միջին բերքը։ Անցեալ 1889 թուականին վատ բերքը, պաշտոնական հաղորդագրության համեմատ, պէտք է վերագրել ֆիլոքսերային, միլդիուին և վազի ծառերի միւս հիւանդություններին։ Ամենից շատ փոփոխեցին նահանգները՝ Ստորին-Ալպերի, Ծովի-Ալպերի և Իրալի, մինչդեռ Շամպայն, Նիվերնէ և ուրիշ նահանգները շատ լաւ բերք ունեցան։

Գինու յատկությունը վերին աստիճանի բաւարար էր։

Բերքի պակասորդը նաև 1889 թուականին լրացուց օտար գինիների ներմուծումով։ Առաջին տասնամեակի ամիսներում այդ ներմուծումը հասաւ 9.504.000 հեկտոլիտրի։ Սոցանից՝

0.372.000	հեկտոլիտր	Իսպանիայից
1.346.000	»	Ալժիրիայից
820.000	»	Պորտուգալիայից
92.000	»	Իտալիայից

Գինեգործությունը խնձորից և չաքարից, որպէս նաև չամիչից, չարունակեց պակասել. առաջիններից ստացուեց 1.479.000 հեկտոլիտր, վերջինից՝ 1.826.000 հեկտոլիտր, միասին ուրեմն՝ 3.305.000 հեկտոլիտր, մինչդեռ 1888 թուականին այդ նիւթերից գինի էր պատրաստուել 4.693.000 հեկտոլիտր։ Այդ ուրախալի երևոյթ է։

ՊԱՐԻԶԻ ԲԱՂԱՔԱՑԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԸ

Պարիզ, 5 յունուարի.

Համալսարանական խորհրդական Լաւի հրատարակում է այսօր մի զեկուցում Պարիզի ուսումնարանների մասին։ Զեկուցման հեղինակը նախկին ուսուցիչ է։ Նորա հրատարակած թվերից քաղում ենք հետևեալը.

Կայսրության վերջին տարում (1870 թ.) Պարիզը ունէր՝

96 ուսումնարան փոքրիկ երեխաների համար։

127 տղայոց տարրական ուսումնարան։

129 աղջկերանց տարրական ուսումնարան։

1889 թվին այդ թվերը փոխուեցին այսպէս՝

129 ուսումնարան փոքրիկ երեխաների համար։
194 աղայոց տարրական ուսումնարան։
176 աղջկերանց տարրական ուսումնարան։

Այդ փոխուԹիւնների հետ փոփոխուցին նաև այլ ուսումնարանների պերսօնալը և նոցա ռոճիկները։ Փոքրիկ երեխաների ուսումնարանները ունին 129 տեսչուհիներ և 323 վարժուհիներ. տղայոց տարրական ուսումնարանները՝ 194 տեսուչ և 1332 ուսուցիչներ, աղջկերանց տարրական ուսումնարանները՝ 176 տեսչուհիներ և 1269 ուսուցիչներ։

Գանք այժմ միջնակարգ դպրոցներին, որոնք կամ տէրունական են, կամ քաղաքային։ Առաջինները կոչւում լիցէ (lycée), երկրորդները՝ կօլլէժ (collège) և էկոլ (école—ուսումնարան, դպրոց)։ Կօլլէժներից մի քանիսը համապատասխանում են Գերմանիայի և Ռուսիայի կլասիկական գիմնազներին, իսկ մի քանիսը՝ ռէալական դպրոցներին։ Արդ, 1870 Թ. Պարիզը ունէր միայն 4 քաղաքային կօլլէժներ՝ Կօլլէժ Ռոլլէն, և Շապտալ և Էկոլ Տիւրպօ և Կոլբեր։ Վերջին երկուսը ռէալական դպրոցներ են։ 1870-ից դէս բացած են 5 ուրիշ միջնակարգ դպրոցներ քաղաքի հաշուով՝ երեքը տղայոց և երկուսը՝ աղջկերանց։ Բացի դոցանից բացած են աղջկերանց համար նաև 5 արհեստապիտական դպրոցներ։ Որպէս տղայոց համար, նոյնպէս և աղջկերանց համար կան տէրունական լիցէներ, որպէս՝ Լիցէ Ֆենելօն, Լիցէ Ռասին և այլն. բայց այստեղ խօսքը միայն քաղաքային դպրոցների մասին է։

Ուսուցչական պերսօնալի ռոճիկները շատ բարւոքուցին։ Տարրական դպրոցների տեսուչների ռոճիկները առաջ էին 2.500 առ նուազն և 3.500 ֆրանկ առ առաւելը, իսկ այժմ 4.100 և 5.300 ֆրանկ են։ Տեսչուհիներինը էին՝ 2.300 և 3.550 ֆրանկ, այժմ՝ 2.900—4.550 ֆրանկ։ Տարրական ուսումնարանի ուսուցիչները ստանում էին 1.700—2.400 ֆրանկ, այժմ՝ 2.100—3.600 ֆրանկ, վարժուհիները՝ առաջ 1.500—2.000 ֆրանկ, այժմ՝ 1.900—3.100 ֆրանկ և այլն։

Պարիզ քաղաքը 1889 Թ. իւր ուսումնարանների համար նշանակած էր իբր սովորական ծախք՝ 24.724.403 ֆրանկ, մինչդեռ 1871 Թւականին ուսումնարանների համար նշանակւած էր միայն 9.600.896 ֆրանկ։ Բացի այդ տարեկան սովորական ծախքերից, քաղաքը 1871—1877 Թ. մսխեց ուսումնարանների վերայ արտակարգ կերպով 84 միլլիոն ֆրանկ, ուսումնարանների շինուԹիւնները կառուցանելու և այլ պարագաներով հարստացնելու համար։